ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

25 ապրիլի 2019 թ.
№ 6 (1040)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊՐԻԼԻ 24. հայ ժողովրդի պատմական ցավի ու հիշողության օր

Ապրիլի 24-ը Հայոց Մեծ Եղեռնի զոհերի ոգեկոչման օրն է, հայ ժողովրդի պատմական ցավի ու հիշողության օրը:

20-րդ դարի առաջին ցեղասպանությանը զոհ գնաց 1.5 մլն հայ, սակայն այսօր էլ Թուրքիան ժխտում է իր նախորդների կատարած հանցագործությունը, փորձում խեղաթյուրել փաստերը: Սակայն իրականությունն ու փաստերն ավելի խոսուն են, քան ժխտողական քաղաքականությունը, այսօր էլ յուրաքանչյուր հայ մերժում է այդ քաղաքականությունը և հատուցում պահանջում:

Ամեն տարի համայն հայությունը հարգանքի տուրք է մատուցում Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, Ծիծեռնակաբերդում դրոշներ ու ծաղիկներ են խոնարհվում: Ամեն տարի հիշատակի երթին միանում են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, հիմնական և ավագ դպրոցների աշակերտները:

Այս անգամ աբովյանականների երթին միացան նաև բուհում կազմակերպված միջազգային եռօրյա գիտաժողովին Միացյալ Թագավորությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից և Իսրայելից հրավիրված անվանի գիտնականները:

Հիշելով անցյալի ողբերգությունը՝ ստեղծագործ հայ ժողովուրդը երբեք չի կորցնում իր հավատն ու լավատեսությունը լուսավոր ներկայի ու ապագայի հանդեպ:

էդուարդաս ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ՄԻ՛ ԼԱ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն

Մի՛ լա, Հայաստա՛ն, ծանր է իմ սրտին
Քո կոմիտասյան հառաչը տխուր...
Դեռ բոցկլտում է արեգակը հուր,
Եվ բոցկլտում է ժողովուրդն այս հին:

Գիտեմ, թե մի օր հազար ու հազար
Ջոհերիդ աճյունն իրար գումարվի,
Գոյանա պիտի սրբազան մի սար,
Որ Արարատին կհավասարվի:

Եթե քո թափած արցունքը վարար
Գետերի փոխվեր ու Սևան հոսեր,
Սևանը կելներ ափերից իր քար
Եվ օվկիանոսի ձայնով կխոսեր:

Թե միանգամից ողբերդ բոլոր
Եվ հառաչանքիդ ձայները տխուր
Ելնեին դեպի երկնային ոլորտ,
Պատռվեր պիտի Աստծո սիրտը խուլ:

Ասա՛, ուրեմն, այդ ի՞նչ ուժ ունի,
Ինչպե՞ս դիմանա իմ սիրտը չնչին
Բիրտ հարվածներին այդ սուր դաշույնի
Եվ կոմիտասյան երգի հառաչին:

Թարգմանությունը՝
Վահագն ԴԱՎԹՅԱՆԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Ժամանակակից գործնական հոգեբանությունը չունի հոգեբանական հիմնախնդիրների դասակարգման համընդհանուր ընդունված համակարգ (ինչպես՝ DSM կամ МКБ-ն՝ բժշկության մեջ), որի հետևանքով այցելուների խնդիրների ախտորոշումը դառնում է ամբողջությամբ սուբյեկտիվ գործընթաց: Բացի այդ, գործնական հոգեբանության ուսուցման ժամանակ ներկայացվում են խնդիրների լուծման մեթոդներ և տեխնիկաներ, իսկ ինքնին հոգեբանական խնդիրները, դրանց էությունը, բնութագրերը, տեսակները մնում են առկախ»: Հենց այս խնդրի լուծման ուղիներ գտնելուն էր միտված Մանկավարժական համալսարանում ապրիլի 21-23-ն անցկացված «Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները» խորագրով միջազգային եռօրյա գիտաժողովը, որին մասնակցում էին Միացյալ թագավորությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Իսրայելից հրավիրված, Հայաստանի տարբեր բուհերի և կենտրոնների մասնագետներ:

➤2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

➢1 Ապրիլի 21-ը մեկնարկեց քննարկումներով, որոնք վերաբերում էին հոգեբանական խնդրի էությանը, բնութագրերին, տեսակներին ու ախտորոշմանը: Հայաստանի և տարբեր երկրներից հրավիրված հոգեբանները ելույթներ ունեցան՝ տարբեր տեսանկյուններից մոտենալով խնդրո առարկային: Ելույթները վերաբերում էին հոգեբանության խնդրի էությանը, անձի խնդիրների՝ ախտաբանական, սոցիալ-տնտեսական և այլ տեսակների տարբերակմանը, հոգեբանական խնդիրների դասակարգման անհրաժեշտությանն ու հնարավորությանը, մոդելներին ու տեսակների տարորոշմանը:

Ելույթ ունեցողները հիմնականում պրակտիկ հոգեբաններ էին, հոգեթերապևտներ, որոնք շահագրգիռ քննարկում ծավալեցին հոգեբանական խնդիրների ախտորոշման, ախտանիշների ու համախտանիշների բացահայտման ռազմավարության, հոգեբանական խնդրի լուծումների շուրջ:

Այս տեսանկյունից իրենց հետաքրքիր մոտեցումները ներկայացրին Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր Դ. Լեոնտևը, Կազանի Հոգեկան առողջության խնդրի ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Վ. Մենդելևիչը, Բերգենի համալսարանի պրոֆեսոր, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ասոցիացիայի նախկին նախագահ Դ. Կուկը, Յարոսլավլի Կ. Դ. Ուշինսկու անվան ՊՄՀ-ի ընդհանուր և սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ Վ. Մազիլովը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները կարևորեցին հոգեբանական պրոբլեմների քննարկմանն ու դասակարգման համակարգի ստեղծմանը նվիրված գիտաժողովի անցկացումը, մասնավորապես այդ խնդիրների դասակարգման համակարգի ստեղծման հնարավոր լուծումներ գտնելու Մանկավարժական համալսարանի փորձը համարելով խիզախ քայլ:

«Հոգեբանական խնդրի դասակարգումն անհրաժեշտ է, բայց հազիվ թե հնարավոր է... Սա իմ կարծիքն է: Ի՞նչ կտա այն մեզ. կտա նոր գործիքներ՝ ճիշտ ախտորոշելու հոգեբանական խնդիրը»,-ասաց Վ. Մենդելևիչը:

Իսկ Դ. Կուկի կարծիքով՝ «հոգեբանական խնդրի դասակարգումը մի գործոն է, որը կարող է աջակցել խնդրի բացահայտմանը և ստեղծել հետազոտական բազա, անպայման պետք է բացահայտել, թե ինչ է հոգեբանական խնդիրը և այդ ուղղությամբ շարժվել առաջ»:

Քննարկումների ընթացքում հնչեցին հետաքրքիր մտքեր ու ձևակերպումներ. բանալին ունենք, կողպեքը՝ ոչ, մոտեցումների ու մեթոդների շուրջ հոգեբանների, հոգեթերապևտների ու հոգեբույժների միջև հնարավոր է երկխոսություն, նախ պետք է որոշարկել դասակարգվող և չդասակարգվող խնդիրները, քանի հոգեբան՝ այնքան ախտորոշում...

Բոլոր ելույթներում մի ընդհանուր գաղափար կար. մեր կյանքի բոլոր ոլորտներում կան հոգեբանական խնդիրներ, և այդ հոգեբանական խնդիրները շատ յուրօրինակ են, անհատական: Ինչպե՞ս փնտրել խնդիրը՝ ոչ մի գրքում այս մասին գրված չէ: Ինչպե՞ս որոշել՝ ո՞րն է խնդիրը, խնդիր կա՞, թե՞ չկա, մենք սովորում ենք մեթոդները՝ չիմանալով վերոհիշյալ հարցերի պատասխանները...

Ամփոփելով խնդրի շուրջ շահագրգիռ մասնագետների առաջին օրվա ելույթներում արտահայտված եզրահանգումները՝ ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խուդոյանը վստահեցրեց, որ արտահայտված գաղափարների շուրջ կմեկտեղեն բոլոր ջանքերը՝ հոգեբանական խնդիրների դասակարգման ստեղծման համար գտնելու հնարավոր լուծումներ:

Ապրիլի 22-ին տեղի ունեցավ միջազգային գիտաժողովի հանդիսավոր բացումը: Բացման ելույթով հանդես եկավ Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը: Մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի անունից ռեկտորը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին, կարևորեց հոգեբանական խնդիրներին, բնութագրերին և դրանց դասակարգման հնարավոր ուղիները գտնելու փորձին վերաբերող քննարկման թեմաները, ընդգծելով, որ այդ համատեքստի ներքո ընտրված զեկուցումները գիտական են և հանրային նշանակություն ունեն:

Ռեկտորը հատկապես ընդգծեց գիտաժողովի մասնակիցների ներկայացուցչական կազմի առկայությունը և մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք:

ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խուդոյանը հոգեբանական գիտության ժամանակակից խնդիրների համատեքստում խոսեց գիտաժողովի անցկացման հիմնական նպատակների ու խնդիրների մասին՝ հիմնավորելով հոգեբանական հիմնախնդրի դասակարգման համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը:

«Հոգեբանական պրոբլեմը հիվանդություն չէ, բայց եթե այդ պրոբլեմը չլուծվի՝ այն կդառնա հիվանդություն»,-ասաց Ս. Խուդոյանը՝ միաժամանակ անդրադառնալով ըստ ոլորտների պրոբլեմների դասակարգմանը և այդ համատեքստում նաև ռազմավարության ու մեթոդների մշակմանը:

Պլենար նիստը ավելի քան հագեցած էր կիրառական հոգեբանության բազմաբնույթ խնդիրները բացահայտող-վեր հանող զեկուցումներով: Իրենց զեկուցումներում հետաքրքիր տեսանկյուններ արտահայտեցին Դ. Ա. Լեոնտևը («Գոյաբանական խնդիրները որպես զարգացման ռեսուրս»), Վ. Դ. Մենդելևիչը («VS հոգեբանական երևույթը. հոգեախտաբանական ախտանիշ. տարբերակումը հանուն արդյունավետ շտկման»), Դ. Ջ. Կուկը («Անձի հոգեախտաբանական խանգարումը և իրավաբանական պրակտիկան. հիմնական խնդիրները»):

Ըստ Դ. Ա. Լեոնտևի՝ «միշտ չէ, որ խնդիրն ինչ որ վատ բան է, որը պետք է անպայման լուծել, շատ հաճախ խնդիրը համարվում է առաջընթացի աղբյուր կամ զարգացման կարևոր նախապայման: Թվում է, թե «խնդիր» բառն ինչ-որ անցանկալի բան է նշանակում, և լավ կլիներ, որ չլիներ: Երբ ինչ որ բան այն չէ, ասում ենք՝ խնդիր ունենք, բայց այն չի կարող արտահայտել այն ողջ իմաստը, որ կարող էր արտահայտել պրոբլեմ, «խնդիր» հասկացողությունը»:

Զեկուցողն անդրադարձ արեց Կարլ Պոպերի «Կյանքը պրոբլեմների որոշումն է» գրքում առաջ քաշված հարցադրումներին. սխալներից չես խուսափի, և որ պրոբլեմները ոչ այնքան լուծվում են, որքան փոխակերպվում են մեկ այլ պրոբլեմի:

Մեջբերելով տարբեր տեսաբանների կարևորագույն մտքերն ու հարցադրումները՝ Դ. Ա. Լեոնտևն ասաց, որ տարբեր ոլորտների հոգեբանական խնդիրների ուսումնասիրման արդյունքում առանձնացրել է խնդրի տարբերակման 4 հիմնական դեպք, որի վրա էլ հենվում է իր պրակտիկ աշխատանքում:

ՌԴ Առողջության հոգեկան հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Դ. Մենդելևիչն իր զեկուցման մեջ անդրադարձավ հոգեբանական երևույթ-հոգեախտաբանական ախտանիշ եզրույթներին և խոսեց դրանց տարբերակման մասին՝ հանուն շտկման արդյունավետության: Նրա կարծիքով՝ անհրաժեշտ է մշակել հոգեթերապևտիկ միջամտությունների ալգորիթմեր, որոնք կկիրառվեն տարատեսակ հոգեբանական երևույթների հետ աշխատելիս: Մենդելևիչն այն համոզմունքին է, որ պետք է առաջին հերթին ստեղծել հոգեբանական երևույթների բացատրական բառարան և մշակել դրանց տարբերակման ախտաբանական չափանիշների համակարգ: Վերջինս անդրադարձավ նաև գոյաբանական տագնապին՝ որպես հոգեբանա-հոգեբուժական խնդրի մոդելի, ապա խոսեց հոգեբանական ֆենոմենի, հոգեախտաբանական երևույթի, ինչպես նաև հոգեբանական օգնության առանձնահատկությունների մասին:

Դեյվիդ Կուկը հանգամանորեն խոսեց անձի հոգեախտաբանական խնդիրների և իրավաբանական պրակտիկայի մասին, առանձին փաստերով և օրինակներով ներկայացրեց հիմնական խնդիրները:

Այնուհետև աշխատանքը շարունակվեց 5 մասնախմբերում:

Գիտաժողովի մասնակիցների զեկուցումները նպատակ ունեին գտնել գործնական հոգեբանության մի շարք՝ առաջին հայացքից պարզ թվացող, բայց էական նշանակություն ունեցող հարցերի պատասխաններ՝ «հոգեբանական խնդիր» եզրույթի ձևակերպումից ու հոգեբանական-հոգեբուժական խնդիրների սահմանների տարորոշումից մինչև հոգեբանական խնդիրների տեսակների, մակարդակների ու արտահայտման ձևերի, հոգեբանական խնդիրների դասակարգման համակարգում:

Հնարավո՞ր է հոգեբանության զարգացման սլաքներն ուղղորդել վերոհիշյալ խնդիրների լուծմանը՝ մշակելով հոգեբանական խնդիրների ախտորոշման չափանիշներ, որոնք գործնական կիրառության հիմք կհանդիսանան... Այս հարցադրման պատասխաններն էին փորձում գտնել ու բացահայտել եռօրյա գիտաժողովի մասնակիցները, որոնք խիտ օրակարգով քննարկումներին զուգահեռ հասցնում էին այցելել մայրաքաղաքի և մոտիկ մարզերի տեսարժան վայրեր:

Գիտաժողովի ընթացքում «Հոգեբանական խնդիրների դասակարգման և ախտորոշման համակարգի» ստեղծման աշխատանքները կազմակերպող միջազգային աշխատանքային խումբ ձևավորվեց. դա լավագույն սկիզբ էր՝ հիմնախնդրի ինտեգրման և այլ հարթակներում քննարկելու առումով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ռուսապրանյան պատվիրակության այցը

ՌԴ տարբեր բուհերի համալսարանների և ինստիտուտների ներկայացուցչական պատվիրակությունը Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության ղեկավար Աննա Ստեփանյանի ուղեկցությամբ ապրիլի 19-ին հյուրընկալվեց Մանկավարժական համալսարանում:

Հյուրերը շրջայց կատարեցին բուհի պատմության թանգարանում, ապա «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտում: ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանը ներկայացրեց Մանկավարժական համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ձեռքբերումները, միջազգային գիտաժողովներում մեր փորձի արժևորումը:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Վահան Սարգսյանը խոսեց Հայաստանի դպրոցներում «Շախմատ» առարկայի պարտադիր ներդրման մասին, մասնավորապես ընդգծեց հոգեբանների և սոցիոլոգների թիմային հետազոտական աշխատանքը, որը ցույց է տալիս առարկայի արդյունավետությունը դպրոցում:

Պատվիրակությանն ընդունեց նաև ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Նա խոսեց կրթության ոլորտում հայ-ռուսական հարաբերությունների մասին, մասնավորապես անդրադառնալով Ռուսաստանի Դաշնության գործընկեր բուհերի հետ սերտ կապերին:

Խոսելով հայ-ռուսական կրթական կապերի զարգացման ուղիների մասին՝ ռեկտորը մատնանշեց «Ռուսհամագործակցության» հետ համագործակցությունը, ինչպես նաև բուհում գործող Պուշկինի անվան թեստավորման ինստիտուտի աշխատանքը:

Ակտիվ խոսակցություն ծավալվեց համալսարանների պարբերականներում գիտահետազոտական հոդվածների փոխադարձ տպագրման, շախմատի դասավանդման փորձի փոխանակման, այլ հարցերի շուրջ:

Թեև Մանկավարժական համալսարանում ամեն ինչ արվում է ռուսաց լեզվի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, այնուամենայնիվ ՀՊՄՀ ռեկտորն իր մտահոգությունն արտահայտեց Հայաստանում ռուսաց լեզվի հանդեպ երիտասարդության՝ օրեցօր նվազող հետաքրքրությունների մասին:

Ռեկտորը վստահեցրեց՝ եթե օտար լեզուն դասավանդողը այդ լեզվի կրողն է, դասավանդումն առավել արդյունավետ է և առաջարկեց այդ ուղղությամբ ուղիներ գտնել:

Պատվիրակության անդամները շնորհակալություն հայտնեցին հետաքրքիր հանդիպման և շրջայցերի համար՝ հավաստիացնելով, որ սիրով կշարունակեն գիտակրթական համագործակցությունը Մանկավարժական համալսարանի հետ:

Հավելենք, որ պատվիրակությունը եղել է նաև Երևանի տարբեր դպրոցներում, համագործակցության կապեր ստեղծել:

Ս. ԱՍՐՅԱՆ

Մշակութային երկխոսության նոր հարթակ

Մանկավարժական համալսարանում իրենց երկշաբաթյա պրակտիկան կանցնեն մի խումբ շվեյցարացի ուսանողներ և դասախոսներ: Ցյուրիխի արվեստների համալսարանի և «Արտաս» հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում մրցույթը հաղթահարած Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 8 ուսանող և 2 դասախոս սեպտեմբերին փոխադարձ այցով կլինեն Ցյուրիխի արվեստների համալսարանում:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը ողջույնի խոսքում կարևորեց նոր սկսված համագործակցությունը՝ վստահ, որ այն կլինի երկուստեք շարունակական և արդյունավետ:

«Սա ևս մեկ կարևոր քայլ է պրակտիկայի կատարելագործման ճանապարհին, որը հնարավորություն կտա ոչ միայն զարգացնել գիտելիքները, ծանոթանալ միմյանց մանկավարժական մեթոդներին, այլև կլինի մշակութային երկխոսության հիանալի հարթակ»,-նշեց Արա Հակոբյանն ու հաջողություն մաղթեց մասնակիցներին:

Մրցույթին դիմողների թիվը մեծ է եղել, որովհետև ապագա արվեստագետը միայն գրքերի միջոցով չի կարող ծանոթանալ եվրոպական մշակույթին. արվեստի հետ պետք է ծանոթանալ տարբեր երկրներ այցելելով:

Դեկանի տեղեկացմամբ, մանկավարժական պրակտիկայի հագեցած առօրյայի մաս են կազմում նաև դպրոցներ այցելությունները, ուր հիմնականում շեշտադրվում են մանկավարժական պրակտիկան և մեթոդներին ծանոթանալը, շվեյցարացի ուսանողները ևս ցանկության դեպքում կարող են մասնակցել դասերին, ստեղծագործել արվեստանոցներում:

Տարբեր ծրագրերի շրջանակներում ֆակուլտետի դասախոսները և ուսանողներն առիթ ունեցել են լինելու այլ համալսարաններում, սակայն Ցյուրիխի արվեստների համալսարանի հետ համագործակցությունն առաջինն է. բուհի ներկայացուցիչները դեռ մեկ տարի առաջ եղել են Մանկավարժականում, ծանոթացել ֆակուլտետի գործունեությանն ու մասնագիտություններին:

Մանկավարժական համալսարանի Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը վստահեցնում է. «Պրակտիկայի բարելավումն ու միջազգային համագործակցության ընդլայնումը Մանկավարժական համալսարանի գործունեության առաջնահերթություններից է: Հույս ունենք, որ նոր ձևաչափով համագործակցությունը կլինի շարունակական և եռակողմ արդյունավետ ինչպես հայ և շվեյցարացի ուսանողների ու դասախոսների, այնպես էլ աշակերտների համար»:

Մնում է հաջողություն մաղթել ծրագրի մասնակիցներին մշակութային երկխոսության նոր հարթակում:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մասնակցեցին համընդհանուր թելադրությանը

Ապրիլի 13-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցակցվեց Ռուսաստանի գիտության և կրթության կենտրոնի (РЦНК) կողմից կազմակերպված «Համընդհանուր թելադրություն» (Тотальный диктант) միջոցառումը, որին մասնակցեց բուհի Օտար լեզուների ֆակուլտետի 1-4-րդ կուրսերի 50 ուսանող: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում «Համընդհանուր թելադրություն» միջոցառումն անց է կացվել չորս հարթակում՝ Երևանում, Վանաձորում, Գյումրիում:

Ինչպես նշել են միջոցառման նախաձեռնողները, թե՛ կազմակերպվածությամբ, թե՛ մասնակիցների թվով «Համընդհանուր թելադրությունը» լավագույնս կազմակերպվել էր ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի կողմից:

Հավելենք, որ թելադրության այս համընդհանուր գրելու ձևը ռուսաց լեզվի իմացության և այն ցանկացած ձևաչափում դրսևորելուն ուղղված քայլ էր, որը հաջողությամբ հաղթահարեցին Մանկավարժականի ուսանողները:



Հասարակության հիմնախնդիրների լուծման ուղիները

Մանկավարժական համալսարանի ասպիրանտ Տիգրան Քեռյանը, ով այս պահին հետազոտական աշխատանքներ է իրականացնում Ավստիայի (Վիեննա) Բոկու քաղաքի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում, ապրիլի 15-ին ամբիոնի կողմից կազմակերպված սեմինարի ընթացքում հանդես եկավ «Բուհական կրթությունը և հասարակության հիմնախնդիրները. մարտահրավերներ, լուծումներ, հեռանկարներ» զեկուցումով: Դահլիճում ներկա էին հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ և ուսանողներ, ԿԳ նախարարության, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչներ, որտեղ անց են կացվել զարգացման տրանսդիսցիպլինար ծրագրեր:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը Մանկավարժական համալսարանի կրթական բարեփոխումների և կրթական գործընթացների զարգացման համատեքստում ներկայացրեց իրենց ամբիոնի՝ կրթության հանդեպ ոչ ստանդարտ մոտեցումների կիրառմամբ իրականացրած հետազոտական աշխատանքները: Կարևորելով Մանկավարժական համալսարանի՝ որպես առաջատար բուհի մասնակցությունը հարափոփոխ աշխարհի զարգացումներին համահունչ գործընթացներին՝ Ա. Խոյեցյանն ընդգծեց միջազգային և միջբուհական փոխադարձ կապերի հաստատման անհրաժեշտությունը, միաժամանակ փաստելով, որ գիտությունը և հատկապես կրթությունն այն օղակն է, որը պետք է ներկայացվի համագործակցության համատեքստում:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն իր ելույթում կարևորեց միջազգային շրջանակներում իրականացվող հարաբերությունները՝ ուսանողների ներգրավվածությունն ու փոխշփումները տարբեր երկրների համալսարաններում, ինչը տալիս է նոր որակ և նոր հարաբերություններ թե՛ կրթական, թե՛ մարդկային առումով: Ընդգծելով աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի արդյունավետ աշխատանքն այս տեսանկյունից, ռեկտորը կանգ առավ այն հանգամանքի վրա, թե եվրոպական կամ այլ բուհերի դասավանդման փորձն ուղղակի ընդօրինակելն անիմաստ է: «Միջազգային կրթական հարաբերություններում պետք է ելնենք մեր իրողություններից, իհարկե հաշվի առնելով միջազգային փորձը,-ասաց ռեկտորը,- որովհետև կիրառելի և արդյունավետ է այն փորձը, որը կարող է մեր առօրյայում կյանքի կոչվել»:

Օրվա բանախոս Տիգրան Քեռյանի նպատակն էր ներկայացնել հասարակության հիմնախնդիրները և մասնավորապես բուհերի մասնակցությունը դրանց լուծման գործին: Այդ համատեքստում նա խոսեց հիմնախնդիրների տեսակների և դրանց լուծման ուղիների մասին, ներկայացրեց նաև տրանսդիսցիպլինար դասավանդման էությունն ու հիմնական առանձնահատկությունները, որպես նորարարական գաղափար ՀՀ կրթական համակարգում՝ ներկայացրեց բուհերի հասարական դերի ընկալմանը և տրանսդիսցիպլինար սկզբունքների կիրառության հնարավորություններին նվիրված հետազոտական աշխատանքի նախնական արդյունքները:

Բանախոսը կանգ առավ հին ու նոր բազմաթիվ մեթոդներից մեկի վրա՝ ներկայացնելով զբոսաշրջության ոլորտում ակտիվ, համակողմանի վերլուծության ապահովման միջոցով տրանսդիսցիպլինար կրթության իր մոտեցումները: Ինչ խնդիրներ կան, որտեղից են դրանք առաջանում. գիտական օբյեկտիվ և սուբյեկտիվ դրսևորումներ, տնտեսական ու քաղաքական խնդիրներ՝ ահա այն ոչ լրիվ ցանկը, որոնց անմիջականորեն բախվում է հասարակությունը:

Խոսելով մասնավորապես կայուն տուրիզմի զարգացման հարցում համալիր մոտեցման անհրաժեշտության մասին՝ Տ.Քեռյանը վստահեցրեց, որ դրա համար համալսարաններն ունեն մեծ հնարավորություններ:

Արդյո՞ք բավարար է դիսցիպլինար խնդիրների ինտեգրման միջոցով լուծել հասարակության հիմնախնդիրները, արդյո՞ք գիտական հոդվածները օգնում են հասարակությանը... Ըստ հետազոտող Տ. Քեռյանի՝ այս և նման այլ հարցերի պատասխանը կտա տրանսդիսցիպլինար մոտեցման մեթոդը:

Ամփոփելով՝ բանախոսը ներկայացրեց եզրակացությունները. «Տրանսդիսցիպլինար կրթությունը և հետազոտությունը Հայաստանում կարող է հնարավոր դարձնել բուհերի և հասարակության համագործակցությունը, ինչպես նաև բուհերին մասնակից դարձնել հասարակության խնդիրների լուծման գործընթացին, և որ տրանսդիսցիպլինար մոտեցման կիրառության համար չկան իրավական խոչընդոտներ: Մեր հասարակությունն էլ պատրաստ է համագործակցության, և եռանդուն ու մոտիվացված դասախոսները, ովքեր պատրաստ են այդ համագործակցությանը դասավանդման նոր մեթոդներով, կարող են դառնալ տրանսդիսցիպլինար կոնցեպտի կիրառության կրողներ:

Ներկաները հարցեր ուղղեցին Տ. Քեռյանին և ներկայացրին իրենց նկատառումները քննարկվող խնդրի շուրջ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նա դաստիարակել է սերունդներ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները նշեցին պրոֆեսոր Լևոն Արաբաջյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը:

Գործընկերները ջերմորեն շնորհավորեցին հոբելյարին՝ ընդգծելով նրա մարդկային բարձր որակները: Ազնիվ, պարկեշտ, կիրթ մտավորականի իր կերպարով նա կրթել և դաստիարակել է սերունդներ, միշտ մնալով համեստ և արդարամիտ:

«Ապագա ուսուցիչներին անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական գիտելիքները: Նրանց մարդկային որակների ձևավորման գործում մեծ ներդրում ունեն նաև դասավանդող դասախոսները,- ասաց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Համլետ Միքայելյանը:- Այս առումով մեր ֆակուլտետի դասախոսների գիտամանկավարժական գործունեության հետ ուսանողներին ծանոթացնելը կարևոր դեր է խաղում հատկապես հայրենասիրության դաստիարակության գործում: Շատերը մուք և ցուրտ տարիներին լքեցին Հայաստանը, բայց շատ-շատերը մնացին, դիմացան բոլոր փորձություններին և իրենց աշխատանքով նպաստեցին երկրի անկախության կայացմանը: Դրանց թվին է պատկանում պրոֆեսոր Լևոն Արաբաջյանը»:

Պրոֆեսորի գիտամանկավարժական գործունեությունը ներկայացրեց ամբիոնի դոցենտ Օլյա Սահակյանը:

Լ. Արաբաջյանը դաստիարակվել է ավանդապաշտ գյումրեցի մանկավարժների ընտանիքում:

1967 թվականին ավարտել է Գյումրիի №14 դպրոցը, 1971-ին՝ Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, իսկ 1978 թվականին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Մաթեմատիկական անալիզ» մասնագիտությամբ:

1982 թվականին ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքում (ք. Նովոսիբիրսկ) պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1997 թվականին Երևանի պետական համալսարանի մասնագիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը: 2003 թվականին ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1997 թվականից մինչև այսօր՝ ավելի քան չորս տասնամյակ, Լևոն Արաբաջյանն աշխատում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Այդ տարիներին նա եղել է ամբիոնի վարիչ, այնուհետև Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան:

Մեծ է պրոֆեսոր Լ. Արաբաջյանի գիտական ներդրումը. տպագրված 45 գիտական հոդված, մենագրություն ինտեգրալ հավասարումների վերաբերյալ, բազմաթիվ ելույթներ տարբեր գիտաժողովներում:

Գիտական աշխատանքին զուգահեռ նա մեծ պատասխանատվությամբ և նվիրումով է լծվել մանկավարժական գործունեությանը: Նրա դասախոսություններն աչքի են ընկնում գիտական բարձր մակարդակով, մանկավարժական վարպետությամբ՝ փաստում են ուսանողները:

Հանդիպում-միջոցառումը եզրափակվեց հոբելյարի խոսքով, ով ընդգծեց ապագա սերնդի դաստիարակության գործում ուսուցչի գործունեության կարևորությունը և այն որակները, որոնցով պետք է օժտված լինի ուսուցիչը:

Գործընկերները և ուսանողները շնորհավորեցին հոբելյարին հիշարժան տարեդարձի կապակցությամբ՝ մաղթելով նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք, ստեղծագործական մեծ եռանդ և բազում հաջողություններ:

Օլյա ՍԱՀԱԿՅԱՆ
Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի ուսանողները կազմակերպել էին 20-րդ դարի ռուս գրականության կարկառուն դեմքերից մեկի՝ բանաստեղծուհի, թարգմանիչ և գրականագետ Աննա Ախմատովայի 130-ամյակին նվիրված գիտաժողով:

Արտասահմանյան գրականության ամբիոնի նախաձեռնությամբ «Աննա Ախմատովան մշակութաբանական տիրույթում» խորագրով ուսանողական գիտաժողովի աշխատանքներին մեծապես աջակցել էին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ամիրխանյանը, ինչպես նաև բակալավրիատի 4-րդ կուրս ուսանողները:

Բանաստեղծուհու գրական ժառանգության առանձնահատկությունների ու բանաստեղծական ուղղությունների, գրականությունմշակութային կապերի ու փոխազդեցությունների վերաբերյալ գրականագիտական հետաքրքիր մոտեցումներ էին Շուշան Հովհաննիսյանի «Ակմեիզմը՝ ռուսական մշակութաբանական երևույթ», Քրիստինե Հազարապետյանի «Աննա Ախմատովան ժամանակակիցների հուշերում», Մանանա Փանոսյանի «Պուշկինը Ախմատովայի ստեղծագործություններում», Շաքե Շահումյանի «Ախմատովան և նրա «Ռեքվիեմը», Լիլիթ Սարոյանի «Հերոսը Ախմատովայի «Պոեմն առանց հերոսի» ստեղծագործությունում», Հասմիկ Մարդոյանի «Ախմատովայի կերպարը արվեստում», Էլմիրա Պողոսյանի «Ա. Պլատոնովը և Ախմատովան», Անի Գալստյանի «Մեծ Հայրենական պատերազմը Ախմատովայի ստեղծագործություններում» զեկուցումները:

Լուիզա Ժամհարյանը հետաքրքիր մատուցմամբ ներկայացրեց Ա. Ախմատովայի «Մուսա» և «Աղոթք» բանաստեղծությունները:

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Փարիզի Աստվածամոր տաճարը

Արհավիրքները խարխլում են մոլորակի հարաբերական անդորրը: Փարիզի Աստվածամոր տաճարի հրդեհը փոթորկեց աշխարհը: Այրվում էին աշտարակը, տանիքը, գմբեթը... Լրատվական թողարկումները, մամուլը, սոցիալական ցանցերը մշուշվել էին վառվող տաճարի ծխով: Ավերիչ կրակն ուզում էր ոչնչացնել այն, ինչը հավակնում է հավերժությանը: Տաճարի մի մասը հրի մատնվեց: Երկնամերձ գմբեթը փլվեց: Քվազիմոդոյի զանգերը լռեցին, վեհաշուք աշտարակն ընկավ գետնահակ: Մի քանի ժամում անէացավ հարյուրամյակների համբերանքը: Կրակը բոցեղեն վերքեր ակոսեց տաճարի սրտում: Հուրը փորձեց մոխրացնել պատմության ձեռագրերը, ջնջել դարերի մատնահետքերը: Բարեբախտաբար, հարյուրավոր հրշեջների ջանքերը կանխեցին հուշարձանի փլուզումը:

Փարիզի Աստվածամոր տաճարը մշակույթի համամարդկային գլուխգործոցներից է: Այն ճառագում է վեհությամբ, բացառիկ մասունքների սրբությամբ, դարերի հնությամբ... Այնտեղ զնգում են հավիտենության արձագանքները, խնկաբույր լռությունն աղոթք է բարձրացնում, հավատի սկիհից օրհնանք է կաթում:

Փարիզի Աստվածամոր տաճարին հանճարեղ կերպով անդրադարձել է Վիկտոր Հյուգոն իր համանուն վեպում: Կոթողը խոյանում է երկնաքող աշտարակների միջև: Գրողը թռչնի բարձունքից դիտում է հուշարձանը: Ժամանակները փոխվեցին, իսկ արժեքների վեմը մնաց անխաթար. այժմ քրիստոնյաները դարերի բարձունքից են նայում տաճարին: Սքանչելի աշտարակը մոտեցնում էր երկնքի սահմանը:

Այս ճարտարապետական հրաշքը գտնվում է Սենայի ափին: Վիկտոր Հյուգոն հակիրճ ու տպավորիչ է պատկերում գետը. «կղզիներով, կամուրջներով ու նավերով խցկված»: Ֆեոդալական անապատում հայտնվել էր գեղեցիկի օազիսը. ռոմանական, ապա գոթական ճարտարապետությունը հնության բույրն են տարածել:

Գրողը Փարիզը ժամանակների խառնարանում է տեղագրում. «Քաղաքը միջնադարի ճարտարապետության և պատմության արդյունք էր, քարեղեն ժամանակագրություն»: Հեղինակը նկարագրում է մշակութային այն հեղաշրջումը, երբ վերածնունդը հաղթանակ էր տոնում միջնադարի նկատմամբ: «Գիրքը կսպանի հուշարձանը». գրողը տարակուսում է Աստվածամոր տաճարի հարատևման շուրջ: Նա վառ է պահում կոթողը հիմնողների հիշատակը. «Աստվածամոր տաճարի առաջին քարը դրել է Կառլոս Մեծը, իսկ վերջին քարը՝ Ֆիլիպ Օգոստոսը»:

Հուշարձանն ինքնատիպ է իր բազմազանությամբ և հավերժությամբ. կենտրոնական վարդազարդը մեկն է կոթողի խորհրդանիշներից: Վիկտոր Հյուգոն անհունի հնչյուններն է լսել տաճարում և անվանել այն «քարեղեն լայնարձակ սիմֆոնիա»: Վեհասքանչ հուշարձանը ենթարկվել է ժամանակի, հեղաշրջումների ու մոդաների փորձություններին: Հեղինակի կարծիքով «մոդաներն ավելի են վնաս հասցրել տաճարին, քան հեղաշրջումները»:

Գրողն ընդգծում է Աստվածամոր տաճարի համամարդկային դերը: Նա կարևորում է կոթողի ճշմարիտ վկայությունն արժեքների տարեգրության ատյանում. «Ժամանակի ամեն մի ծփանք հուշարձանի վրա դնում է իր նստվածքը, ամեն մի ցեղ՝ իր շերտը, յուրաքանչյուր անհատ բերում է իր քարը»: Վիկտոր Հյուգոն փաստագրում է դարերի և սերունդների երկխոսությունը. «Ժամանակը ճարտարապետն է, ժողովուրդը՝ որմնադիր»:

Փարիզի Աստվածամոր տաճարն անբաժան է իր պահապան Քվազիմոդոյից: Զանգերից խլացած ժամիարը խղճի կոչնակն է լսում: Գրողը պատկերում է նրա բնօրրանը. «Աստվածամոր տաճարը Քվազիմոդոյի համար եղել էր հավկիթ, բույն, տոն, հայրենիք, տիեզերք: Կարծես Քվազիմոդոն շունչ էր տալիս վիթխարի հուշարձանին»: Ժամիարը դիմադրում է արհավիրքներին, գթության ձեռք մեկնում հալածվածներին: Աստվածամոր տաճարի ապաստարանում նա ապրելու հույս է տալիս էսմերալդային:

Եվ ահա մի անսանձ հրդեհ եկավ քանդելու ոգեղեն հուշարձանը: Կարծես Հյուգոյի հերոսներն այնտեղ էին, և արհավիրքն ընդհատել էր նրանց հավիտենական երազները. տաճարի մոտ կանգնել էր չարչրկված, բայց հուժկու մի կերպարանք՝ Քվազիմոդոն էր: Մերթ կորստի հրդեհն այրում էր նրան, մերթ դողում էր սառցային վշտից: Կրակի տարերքն անհաղթ էր թվում: Բեկված ղողանջ էր դարձել ժամիարը:

Էսմերալդան վիատությամբ էր զգեստավորվել: Մոխրանում էր այն տաճարը, որը մի ժամանակ իր ապաստանն էր եղել: Գնչուհին մորմոքի զառանցանք էր ապրում: Կլոդ Ֆրոլոն նույնպես տագնապում էր տաճարի ճակատագրով: Նա հիշում էր այն երանելի տարիները, երբ իր հոգին դեռ չէր անարգվել մոլագարության փոթորիկներում: Մի աստվածային, բայց ուշացած զղջում խոշտանգում էր նրան: Կլոդի սրտում ինքնաճանաչման ցոլքն էր առկայծում: Գրենգուարը կանգնած էր քարացած: Փիլիսոփան հայացքն ուղղեց դեպի ամեն տեսություն հեգնող և արժեքներ լափող հսկան: Նրա իմաստասիրական դատողությունները ձեռնունայն էին մնում հրդեհի առջև: Այնտեղ էին Կարլոս Մեծը, Ֆիլիպ Օգոստոսը, որոնց երբեմնի ուժն այժմ լոկ հուշ էր:

Տաճարի շուրջը հավաքված բազմությունն արտասվալից աչքերով աղոթում էր: Ծնկած հույսերի աղերսը երկինք էր բարձրանում: Մարդկանց սրտերն անզորության ճիչերով էին տրոփում: Ժամեր անց տաճարի նորոգման տենչը վերածվեց կամքի: Մարդկությունը վշտի և հույսի բռունցք բարձրացրեց աղետին դեմ հանդիման:

Էմանուել Մակրոնը խոստացավ վերականգնել տաճարի կորուստները: Համընդհանուր միասնությունը մասամբ խմբագրում է պատուհասների խզբզանքը:

Մեր բարեկամ Ֆրանսիան, որպես քաղաքակիրթ պետության օրինակ, դատապարտում է Հայոց ցեղասպանությունը: Նախագահ Մակրոնը ստորագրեց մի փաստաթուղթ, որով օրենքի ուժ ստացավ ճշմարտության իրավունքը. ապրիլի 24-ը հռչակվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օր: Մարդկության դեմ ուղղված աներևակայելի ոճիրի ճանաչումը փոքր-ինչ բուժում է արդարության վերքերը: Ազգակործան վայրագությունը հարկադրաբար իջեցնում է իր նողկալի զենքերը: Վերջին տարիներին Փարիզի Աստվածամոր տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագներ են մատուցվել: Այս տարի ևս այնտեղ պետք է խնկարկվեր սրբադասված զոհերի հիշատակը, սակայն հրդեհն առժամանակ փակեց միջնադարյան գոհարի դռները: Տա Աստված, որ տաճարը վերագտնի իր նախկին տեսքը: Միլիոնավոր քրիստոնյաներ սպասում են ոգեղեն հաղթանակի այդ օրվան:

Ամալյա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
հեռակա ուսուցման 3-րդ կուրս

ՀԱՅԻՆ ՈՒ ԹԵՅԻՆ ԶՐՈՅՑԸ

Քուէյթի երկինքը այսքան ամպամած ու տրտում չէի տեսած:

Վերադարձի ճամբուս վրայ, ձեռքերովս պինդ բռնած մեքենայիս ղեկը՝ մէկ ուղղութեամբ կ'երթայի մտքերուս հետ:

Աջս-ձախս տխրութիւն կը տիրէր, փողոցները գրեթէ ամայացած էին: Քանի մը թշուառ անցորդներ թափանցիկ տոպրակներով ծածկած էին իրենց գլուխները՝ պաշտպանուելու համար երկնքի երկարօրեայ լացէն: Անոնք կապոյտի հեծկլտանքին ծանօթ չէին կարծես: Ինչպէ՞ս թէ... մի՞թէ անոնք չէին ճաշակած ամէն տեսակի վիշտ ու արհաւիրք:

Կ'աճապարեմ. ռատիոյալիքները կը հաղորդեն, թէ անձրեւաբեր, ուժեղ մրրիկ մը շատ արագ կը մօտենայ քաղաքի կեդրոնը եւ ժամերու ընթացքին կրնայ երկիրը վերադարձնել նոյեան օրերուն:

Տուն կը մտնեմ, դուռս պինդ փակելով՝ կ'ուղղուիմ նստասենեակիս լուսամուտին, ուրկէ կը դիտեմ քաղաքը իր ամբողջ մերկութեամբ: Կարծես անհրապոյր կնոջ մը տեսք ունի այսօր:

Կը մտածեմ բնութեան բարիքներու, չար ու բարիին անհաւասար պայքարի մասին: Կը խորհիմ, թէ անոր գրկին մէջ անցեալն ու ապագան միշտ ալ սիրաբանուած են նոյն ուժգնութեամբ, եւ մենք միշտ ալ համբուրած ենք անոնց վաւաշոտ շուրթերը նոյն ցոփութեամբ:

Իսկ ներկան, ուր է ներկան այս բոլորին մէջ:

Քիչ ետք մէկը ուժգնօրէն կը թակէ դուռս: Կը բանամ, ներս կը հրաւիրեմ: Տարիքոտ, բայց եռանդուն կին մը էր, որ ամբողջութեամբ խոնաւ զգեստներով ներս մտնել կ'ուզէր՝ քիչ մը հանգստանալու:

Անմիջապէս տաք թէյ մը կ'առաջարկեմ ու պատրաստելու համար խոհանոց կ'ուղղուիմ:

Ներսէն կը լսեմ անոր տաքուկ ու քնքուշ ձայնը: Անոր հոգեթով պատմութիւնները զիս կը տանին դէպի անցեալ:

Մեծ հաճոյքով կը պատմէ, գրեթէ բոլոր երկիրներուն, կատարած իր ճամբորդութիւններու մասին:

Խոհանոցէս կը կանչեմ.- «Իսկ Հալէպ եղե՞ր էք, ի՞նչ գիտէք Հալէպի մասին... իմ ծննդավայրս է Հալէպը. եթէ Հալէպէն անցեր էք, Խնդրեմ պատմեցէ՛ք, անոր փողոցներու մաքրամաքուր ցեխերուն, անոր ջերմ ու մութ գիշերներու մասին: Բնակիչներուն պարզ ու տխուր երգերը լսե՞ր էք, ըսէ՛ք, խնդրե՛մ ըսէ՛ք...»:

Անարձագանգ խօսքերս հաւաքած ներս կը վազեմ, բայց կինը հոն չէր, անհետացած էր:

Կը վերադառնամ պատուհանս, դուրսը դեռ նոյն փոթորիկն է, նոյն քաոսը... խոհանոցէս եռացած ջուրին ֆշշոցը կը լսեմ, պէտք է շտապեմ դէպի..., բայց մտքերս չեն հնազանդիր հրահանգներուս:

Քիչ անց դուռս դարձեալ կը կանչէ զիս:

«Այս անգամ ո՞վ է», հարց տալով կը բանամ: Սիրասուն պզտիկ աղջիկ մը, մաքուր, կոկիկ... կ'ենթադրեմ, որ դրացիներէն մէկուն աղջիկն է, ու ծանօթ բացագանչութեամբ քիչ մը հաց կը խնդրէ:

Ներս կը հրաւիրեմ ու դարձեալ կ'երթամ խոհանոցս եւ այս անգամ փոքրիկը կը պատմէ թէ իր ծնողները որոշած են վաղը գիշեր, երբ անձրեւը դադրի, վերադառնալ հայրենիք եւ հոն հայրենի հողին վրայ իրենց կեանքը կառուցել:

Աղջիկը միանուագ կը պատմէ ու կը պատմէ ու մէկ-մէկ հարց կուտայ՝ թէ ինչո՞ւ հայրենիքը այնքան քաղցր է:

Չեմ դիմանար ու խոհանոցէս կը կանչեմ.- «Աղջիկ, իսկ դուն գիտե՞ս իմ հայրենիքը ուր է, իմ հայրենիքը, բարձր ու ձիւնածածկ սարերու վրայ կանգնած Հայաստան աշխարհն է, իր 2800 տարեկան Երեւան մայրաքաղաքով, մարդու հայրենիքը անոր սիրտն ու հոգին է: Ես ալ շուտով պիտի վերադառնամ իմ հայրենիքը, ան ալ ըսեմ մարդու հայրենիքը հոն է, ուր իր ընտանիքի ուրախութիւնը, իր գալիքը, իր երազանքները...»:

Տարօրինակ լռութիւնը կրկին զիս կը մատնէ շփոթի, եւ ի՜նչ զարմանք, աղջիկը արդէն անհետացեր է:

Բազկաթոռիս վրայ կ'ինամ անշարժ, կիսամութ սենեակիս մէջ միայն կը լսեմ խոնաւութեան արձագանգը, սեղանիս վրայ թէյն ու հացը իրարու կը նային ու կը մնան անձայն, անոնք որ միշտ հաճելի զրոյցներով եւ իրենց անմահ բուրմունքով կը խանդավառէին, հիմա անշարժացած են ու գրեթէ մեռած:

Շանթահար երկինքը կը լուսաւորէ սենեակս, եւ պատերուս վրայ շարուած նկարները դուրս կու գան շրջանակներէն:

Որոտումը չ'ուշանար...

Երրորդ անգամ դուռս կը բանամ...

Ո՛չ ոք կը գտնեմ դռանս ետին...

Քամին կ'ապտակէ սառած այտերս եւ իր անգութ ներկայութիւնը կը հաստատէ:

Կարօ ԱՐՍԼԱՆԵԱՆ

Քուէյթ 14 Նոյեմբեր 2018

«Գարուն, ծաղիկներ և սեր»

Ռուսաց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված գեղեցիկ միջոցառմամբ Օտար լեզուների ֆակուլտետում ամփոփեցին Մայրության և գեղեցկության տոնը: «Գարուն, ծաղիկներ և սեր» խորագրի ներքո դահլիճում երկար ժամանակ թևածում էր պոեզիան, որն ուղեկցվում էր հոգեպարար երգերով:

Ամբիոնի հյուրն էր բանաստեղծուհի Կարինե Հունանյանը, ով դահլիճում ստեղծել էր գարնանային ջերմ տրամադրություն: Ներկա գտնվող պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողնե-

ին նա ծանոթացրեց իր բանաստեղծական աշխարհին. հիանալի ասմունք, որի բովանդակությունն ու էությունը կինն էր և կնոջ անսահման հմայքը՝ պարուրված ծաղիկներով, սիրով ու գարնան թարմությամբ:

Ռուսաց լեզվով բանաստեղծությունների հիման վրա գրված երգերի հեղինակը կոմպոզիտոր Գայանե Քյոսայանն էր: Այդ երգերը Վասիլի Ռոլիչի գեղեցիկ նվագակցությամբ մեծ վարպետությամբ կատարեցին Դիանա Առաքելյանը, Արթուր Աղաջանովը և Սոֆյա Ավդալյանը:

Միջոցառմանը մասնակցում էր նաև Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան, Ռոսսոտրուդնիչեստվոյի և Հայաստանում Մոսկվայի տան ներկայացուցչական կազմը, ինչպես նաև այլ բուհերի հրավիրյալներ:

«Գարուն, ծաղիկներ և սեր» խորագրով միջոցառումը գեղեցիկ հույզեր արթնացրեց և ներկաներին համակեց կյանքի գեղեցկությունների հանդեպ նոր սիրով ու հավատով:

Ամենամյա դասարանական համերգ

Ապրիլի 5-ին «Նարեկացի» արվեստի կենտրոնում կազմակերպվել էր դաշնամուրային երեկո, որին մասնակցում էր Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Լիլի Խաչատրյանը առկա և հեռակա ուսուցման տարբեր կուրսերի ուսանողների հետ:

Համերգային ծրագրում ընդգրկվել էին Կոմիտասի, Բախի, Մոցարտի, Բրամսի, Ռախմանինովի ստեղծագործությունները:

Համերգն սկսեց Կոմիտասի «Գարուն ա» դաշնամուրային ստեղծագործությամբ, որը կատարում էր դոցենտ Լիլի Խաչատրյանը: Հայկական երգը քնքշորեն տարածվեց լեփ-լեցուն դահլիճում և հուզեց ներկաներին: Իրար հաջորդեցին ուսանողների կատարումները, հատկապես հաջողությամբ հանդես եկան հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհիներ Լուսինե Խաչատրյանը և Սեդա Թորոսյանը:

Համերգի անակնկալը շվիահար, վիրտուոզ կատարող Մինաս Աբրոյանի ելույթն էր, որին նվագակցում էր Լ. Խաչատրյանը:

Համերգն ավարտվեց Լ. Խաչատրյանի կողմից Կոմիտասի դաշնամուրային երեք պարերի կատարմամբ, որոնք հնչեցին հայկական ժողովրդական գործիքների՝ դափի, դուդուկի և քամանչայի ձայներով:

Դասախոսները, ուսանողները, ծնողները և հյուրերը տպավորված էին համերգային հետաքրքիր ելույթներից և ուրախ տրամադրությամբ հեռացան դահլիճից:

Մնում է հավելել, որ «Նարեկացի» արվեստի կենտրոնը սիրով իր դռներն է բացում արվեստի նվիրյալների, մասնավորապես ՀՊՄՀ դասախոսների և ուսանողների առաջ՝ հնարավորություն ընձեռելով պրոպագանդելու դասական երաժշտության լավագույն նմուշները:

Արուսյակ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս

Վարպետության դաս

Երևանի №13 երաժշտական հատուկ դպրոցը փողային գործիքների երաժիշտների պատրաստման լավագույն դարբնոց է: Մանկավարժական համալսարանի դասախոս Սևադա Շհոյանը մշտական կապի մեջ է այդ դպրոցի կոլեկտիվի հետ, պարբերաբար այցելում է տարբեր դասարանների աշակերտներին և անցկացնում վարպետության դասեր: Դպրոց հաճախող երեխաները հիմնականում կարիքավոր ընտանիքներից են, և բուհ-դպրոց կապի միջոցով Ս. Շհոյանը նրանց ծանոթացնում է համալսարանի «Փողային գործիքներ» մասնագիտության հետաքրքիր ու գրավիչ առանձնահատություններին: Մի հետաքրքիր վիճակագրությամբ համալսարանի այս մասնագիտության ուսանողների մեծ մասը վերոհիշյալ դպրոցի սաներն են:

Վարպետության հերթական դասն էր №13 երաժշտական հատուկ դպրոցում, և դպրոց էին այցելել նաև ֆակուլտետի վերոնշյալ մասնագիտության ուսանողները, ովքեր այդ դպրոցի շրջանավարտներ են: Երեխաներից շատերը ուսանողների հետ խոսեցեցին իրենց երազանքի մասին՝ սովորել Մանկավարժական համալսարանի փողային գործիքների բաժնում և ձեռքն առնել այդ երաժշտական գործիքները:

Վարպետության հերթական դասը մասնագիտական նոր գիտելիքներ փոխանցեց հատուկ դպրոցի սաներին, ոգևորեց և ավելի ամրապնդեց ապագա մասնագիտության հանդեպ նրանց կողմնորոշումն ու հետաքրքրությունները:

ԵՎ ԵՐԳԸ ԿԱՊՐԻ

Երբ դարերի մեջ կերտվածն ու քննությունն բռնածը, որպես ժառանգություն մեզ հասածն այսօր դուրս է մղվում մեր առօրյայից և կուտակվում միայն արխիվներում, թանգարաններում ու մատենադարաններում, գնահատվում և արժեքավորում միայն որպես գիտություն, արվեստի պատմություն՝ կորցնելով իր կապը մեր այսօրվա կենդանի հույզի, թրթիռի, երևակայության ու մտածողության հետ, այն դառնում է սոսկ թղթի վրա գրված գիրք-պատմություն մեր փառահեղ երեկվա մասին:

Պետք է նաև հայ ժողովրդի ափին, իսկ այդ ափում կոմիտասյան ժառանգությունն է՝ ժողովրդական երգ-երաժշտության նրա վաստակի մասսայականացմամբ, ինչպես նաև կոմիտասյան գծի, ուղղության, կոմիտասյան ոգու արմատավորման պակասով կամ թերացմամբ: Կյանքն ունի իր պահանջները, բայց պետք է համատեղ ուժերով պահպանել ակունքն ու անքննելի էությունը՝ համաժողովրդականը, անկախ տեղաշարժերից ու քաղաքակրթության առաջընթացից, քանզի, ապրելու իրավունք ու հնարավորություն երգին տալիս է կատարողը: Իր կյանքի ու կենցաղի մեջ այդ երգը պիտի արմատավորի, ժողովուրդն այն պետք է դարձնի ինքնարտահայտման միջոց, և երգը կապրի:

Պետք է պահպանել կենսական անհրաժեշտություն դարձած, իրավ որպես մասունք, իրավ սրբություն, իրավ հավատ, իրավ ինքնության վավերագիր դարձած հիշողության ծալքերը, այն օրերի անկրկնելին ու անդարձը:

Մենք պետք է ականջալուր ու ականատես լինենք մեր ժողովրդի արևի հիմնին՝ տիեզերքի արևին: Եվ սա՞ չէր, արդյոք, Կոմիտասի նախանշած ուղին…

Կոմիտասը ազատել է մեր երգն ու երաժշտությունը պատմության քառուղիներում կուտակված անհարազատ և օտար նստվածքներից: Մենք ազգային երգը պատկերացնում ենք այնպես, ինչպես մատուցել է մեզ Կոմիտասը, և լավ կլիներ, որ մյուս բոլոր ասպարեզներում էլ ունենայինք մի-մի Կոմիտաս…

Բայց պետք է լավատես լինել: Հայ ժողովուրդը վաղ թե ուշ կերգի, չգիտեմ՝ ինչ և ինչպես, բայց միայն իրեն բնորոշ, իրեն արտահայտող իսկական մի բան, իրենը…

Աննա ԿՈՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
բակալավր, 1-ին կուրս

Ռդիսպոս Հարությամ ի մեծ-էլոց Օրհնյալ է Հարու-Բյու-նը Ռդիսպոսի

Այս խոսքերով և աղոթքով սկսվեց Զատկի տոնին նվիրված միջոցառումը: ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները պատրաստել էին թեմատիկ սեղաններ և ներկայացրին տոնի խորհուրդը:

Միջոցառմանը ներկա էին ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը, ՀԵՀԵՄ հոգևոր տեսչի և կենտրոնական գրասենյակի տնօրենի օգնական Գեղամ Սարկավագը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները:

Ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը և ուսանողական խորհրդի նախագահ Զարուհի Խաչատրյանը:

Նշանավոր կանայք

Հատուկ մանկավարժության նվիրյալը

Մանկավարժության, մասնավորապես հատուկ կրթության ոլորտին նշանակալի ավանդ է բերել Ռաիսա Իվանովնա Լալաևայի գիտական գործունեությունը:

Գերազանցությամբ ավարտելով Մորչանսկի մանկավարժական համալսարանը՝ նա ստացել է տարրական դասարանների ուսուցչի մասնագիտություն: Հետագայում ավարտելով նույն համալսարանի տիֆլոմանկավարժության բաժինը՝ նա աշխատել է տեսողության խնդիրներ ունեցող երեխաների կրթական համակարգում, հեռակա ուսուցմամբ, զուգահեռ ստացել է նաև օլիգոֆրենոմանկավարժի մասնագիտություն և որպես լոգոպեդ-ուսուցիչ իր աշխատանքային գործունեությունն է ծավալել օժանդակ դպրոցներում:

1970 թ.-ին ավարտելով Ա. Ի. Գերցենի անվան ԼՊՄՀ-ի հոգեպաթոլոգիայի և լոգոպեդիայի ամբիոնին կից գործող ասպիրանտուրան, Ռ. Լալաևան մեկ տարի անց հաջողությամբ պաշտպանել է «Օժանդակ դպրոցներում սովորող 1-2 դասարանների աշակերտների ընթերցանության խանգարումները և դրանց հաղթահարման ուղիները» խորագրով թեկնածուական թեզը: Նա իր հաջորդ գիտական աստիճանն ստացել է 1989 թ.-ին՝ պաշտպանելով «Խոսքի խանգարումները և դրանց շտկման համակարգը օժանդակ դպրոցի լոգոպեդական աշխատանքում» դոկտորական թեզը: Տարիներ շարունակ որպես պրոֆեսոր աշխատել է ԼՊՄՀ-ի հոգեպաթոլոգիայի և լոգոպեդիա ամբիոնում և հեղինակել է մի շարք գիտական աշխատություններ, լոգոպեդական դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:

Բարձր գնահատելով Ռաիսա Լալաևայի ներդրումը հատուկ մանկավարժության և լոգոպեդիայի բնագավառում՝ 1998թ.-ին նրան շնորհվել է Ռուսաստանի Ֆեդերացիայի կառավարական պարգև՝ դափնեկրի կոչում: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվել է մտավոր թերզարգացում ունեցող երեխաների ծանր խոսքային խանգարումների կառուցվածքի ուսումնասիրման գիտահետազոտական դպրոցը: 1999-2003 թթ. եղել է Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվան պետական համալսարանի դեֆեկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, 2006 թվականից նույն ամբիոնի վարիչ: Նրա գիտական աշխատանքների թվին են պատկանում խոսքի այնպիսի խանգարումների դասակարգումները, ինչպիսիք են դիսլեքսիան և դիսգրաֆիան՝ կարդալու և գրելու դժվարությունները, դրանց հաղթահարման լոգոպեդական ուղիներն ու միջոցները:

Լոգոպեդիայի արդի խնդիրների լուծման գործընթացում անգնահատելի է Ռաիսա Լալաևայի դերը: Նա առաջիններից էր, որ խոսքային խանգարումների առաջացման մեխանիզների վերլուծությունը դիտարկեց հոգեբանական տեսանկյունից: Այս գաղափարներն իրենց հիմնավորումներն են ստացել նրա կողմից ղեկավարված մի շարք թեկնածուական թեզերում:

Նա հեղինակել է «Լոգոպաթոհոգեբանություն», «Դպրոցականների կարդալու գործընթացի խանգարումները», «Լոգոպեդիան աղյուսակներով և սխեմաներով», «Խոսքի թերապիա», այլ արժեքավոր դասագրքեր և ուսումնական ձեռնարկները:

Հատուկ մանկավարժության և լոգոպեդիայի բնագավառում, երկար տարիների նրա հետազոտական հետաքրքրությունները հիմնականում վերաբերում են մտավոր խանգարումներ ունեցող երեխաների կարդալու և գրելու դժվարությունների առանձնահատկությունների բացահայտմանն ու լոգոպեդական աշխատանքների կազմակերպման ուղիների լուսաբանմանը:

Լինելով Լենինգրադի Ա. Ս. Պուշկինի անվան պետական համալսարանի դեֆեկտոլոգիայի ամբիոնի վարիչ՝ Ռ.Ի. Լալաևան զեկուցումներով և դասախոսություններով մշտապես հանդես է եկել տարբեր միջազգային և միջբուհական գիտաժողովներում՝ նոր որակ և բովանդակություն հաղորդելով բուհի հետազոտական և գիտական աշխատանքներին:

Իր ծանրակշիռ վաստակի համար նա մշտապես վայելել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության սերն ու հարգանքը:

Ռաիսա Իվանովնայի ղեկավարությամբ պատրաստվել է 13 թեկնածուական և դոկտորական թեզ, հրատարակվել 211 գիտական և մեթոդական աշխատանք, այդ թվում՝ մենագրություններ, համահեղինակային դասագիրք, ուսումնական ձեռնարկներ, հոդվածներ:

Այսօր էլ, վստահ կարելի է ասել, որ հատուկ կրթության և լոգոպեդիայի բնագավառում մեծ և անփոխարինելի է Ռ. Ի. Լալաևայի մասնագիտական ներուժը, նրա կողմից հեղինակած մեթոդիկաները հիմք են հանդիսանում ինչպես ուսանողների, այնպես էլ պրակտիկ գործունեությամբ զբաղվող լոգոպեդների մասնագիտական աշխատանքներում:

Մաղլեն ՄԻՆԱՍՅԱՆ

Նվիրված էր Հայոց մեծ եղեռնի 104-րդ տարելիցին

Ապրիլի 14-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում միջին և բարձր դասարանների հայագիտության հերթական բաց դասը նվիրված էր 1915 թ. Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցին: Դպրոցի տնօրեն մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով դպրոց էր այցելել Ռուսաստանի Դաշնության ԳԱ Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի գիտաշխատող, տեխնիկական գիտությունների թեկնածու, տաղանդավոր էքսկուրսավար Նինա Խաչատուրյանը: Նա ինտերակտիվ ձևով ներկայացրեց պատմական փաստեր և առանցքային փաստարկներ, որոնք կապված էին ապրիլի 24-ի հետ, ինչպես նաև ներկաների ուշադրությունը հրավիրեց բացառիկ արժեք ներկայացնող գրքերի հրատարակություններին:

Երգչախմբի և երաժշտության ուսուցչուհի Արփի Սամվելյանը խոսեց հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմ» ստեղծագործության մասին, որի պրե-

միերան կայացել է Գերմանիայում 2011 թվականին: 2013 թվականի ապրիլի 24-ին այն ներկայացվել է Երևանում՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Ի դեպ, 2018 թ. հունվարին Լյուքսեմբուրգում կայացած դասական երաժշտության միջազգային մրցույթում «Ռեքվիեմն» արժանացել է գլխավոր մրցանակի «Ժամանակակից երաժշտություն» անվանակարգում:

Ժողովրդական պարերի ուսուցչուհի Նոնա Ռաֆայելյանը խոսեց 2015 թվականի «Նինահար» պարային համույթի և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Վերածնվածներս» հայտնի պարի մասին՝ ընդգծելով, որ տեսահոլովակի նկարահանումներն իրականացվել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի և «Հաղարծին» հայկական եկեղեցու տարածքում ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի երաշխավորությամբ: Երաժշտության հեղինակն է հայ կոմպոզիտոր, թավջութակահար Գրիգոր Առաքելյանը: Նա նույնպես նկարահանվել է տեսահոլովակում և իր իսկ ստեղծած եզակի երաժշտական գործիքով՝ հայկական վիոլայով նվագակցում է տասներկու պարուհիների կատարմանը:

Ճանաչողական զեկույցներով և պատմական տեղեկատվությամբ ելույթ ունեցան նաև լրացուցիչ կրթության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանը և հայոց լեզվի ուսուցչուհի Աննա Օհանյանը: Նրանք պատմեցին այն մասին, որ 2015 թվականից եկեղեցական օրացույցում ապրիլի 24-ը նշվում է որպես Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օր: Հետաքրքիր անդրադարձ եղավ նաև Հայաստանում և ամբողջ աշխարհում Հայոց ցեղասպանության հիշատակը հավերժացնող հուշարձաններին:

2016 թ., Ապրիլ

Եկեք այսօր մենք ազգովի
Ասենք «Հանուն Հոր և Որդվո...»,
Մեր սրտերում մեծ աղոթքի
Խոսքեր ասենք՝ «Հոգվույն Սրբո...»,
Եկեք հիմա մենք աղոթենք,
«Հայր մեր»-ն ասենք, խաչակնքենք:
Եկեք այսօր մենք ազգովի
Ծնկենք մեր մեծ Աստծո առաջ,
Անկեղծացած մեր սրտերի
Աղոթքն ուղղենք դեպի Աստված,
Գլուխներս խոնարհելով՝
Մենք շշուկով աղոթք անենք,
Որ մեզ լսի մեր տեր Աստված,
Մենք մեր երկրում խաղաղ ապրենք:
Եկեք այսօր մեր խոսքն ազգի
Ուղղենք միայն մեր Տեր Աստծուն,
Որ մեր քաջերը սահմանի
Ողջ ու առողջ ետ դառնան տուն:
Ա՜խ, տեր Աստված, թող քո կամքով
Ազգս ապրի միշտ ապահով,
Անհոգ ապրենք, խաղաղ ապրենք
Ու սահմանից լավ լուր առնենք:
Եկեք այսօր մենք ազգովի
Ոտքի՛ կանգնենք, շարժվենք առաջ,
Չար թշնամին թող սարսափի
Հայ զինվորի ցասումից քաջ:
Ու երբ հաղթենք, մենք ազգովի
Հավատով լի իրար փարվենք
Ու հայկական պար քոչարին
Հաղթանակած, ուրախ պարենք:
Ու թող դողա նենգ թշնամին,
Հայրենիքս թող խաղաղվի,
Պարզ երկնքում Հայաստանի
Թող որ ճախրի միշտ աղավնին:
Փա՜ռք քեզ, փա՜ռք քեզ, իմ տեր Աստված,
Թող կատարվի սուրբ խոսքն ասված.
Հայոց ազգը՝ ցավեր տեսած,
Հավատա քեզ, մնա կանգնած:
Եկեք հիմա մենք աղոթենք,
«Հայր մեր»-ն ասենք, խաչակնքենք
Ու մեր հզոր աղոթքն այսօր
Առ Աստված մենք հասցնենք:

Անի ՔԵՐՈԲՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
2-րդ կուրս

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ»

Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում թուրքական իշխանությունների կազմակերպած հայերի ցեղասպանությունը մեկընդմիշտ դաջվել է հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ: Ժողովրդի համառությունն ու կենսահաստատությունը, գոյության համար հարատև պայքարը դարձել է մտորումների առարկա և իր արտացոլումը գտել արվեստում: Հայերի նկատմամբ կատարված բռնությունները, անմարդկային բարբարոսություններն ու ապրած սարսափը կերպարվեստի, քանդակագործության, գրականության, երաժշտության և արվեստի այլ բնագավառներում դար-

ձել է արդիական թեմա: Յուրաքանչյուր արվեստ իրեն հատուկ արտահայտչամիջոցներով ձգտել է ներկայացնել կատարվածը, ցույց տալ ժողովրդի վիշտը, օգնել նրան հաղթահարել ողբերգությունը և հասնել ինքնահաստատման: Արվեստագետների ստեղծագործությունները, ի մի բերված, հավաքական, վավերագրական-փաստագրական մեծ ուժ են ձեռք բերում՝ նեկայացնելով մի ողջ ժողովրդի ոչնչացմանն ուղղված թուրք ջարդարարների իրագործած անօրինակ վայրագությունները:

Ի հիշատակ հայոց ցեղասպանությանը զոհ գնացած մեկ ու կես միլիոն հայ նահատակների՝ աշխարհի տարբեր երկրներում վեր են խոյանում հուշարձաններ՝ որպես իրեղեն ապացույցներ հայ ժողովրդի վերածննդի և հանուն հիշողության պահպանման՝ մոռացության դեմ պայքարի անկոտրում կամքի:

«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ»

Ամբողջ աշխարհում ապրիլի 18-ը նշվում է որպես Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր, որին իր ակտիվ ու անմիջական մասնակցությունն է ցուցաբերում Մանկավարժական համալսարանի թանգարանը: Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա նպատակն է բարձրացնել մարդկության իրազեկվածությունը մշակութային ժառանգության, նրանց խոցելիության մասին և անհրաժեշտ ջանքեր գործադրել նրա պաշտպանության և պահպանման համար:

Համալսարանի թանգարանի առաքելություններից է կրթական աշխատանքի, մշտական ցուցադրությունների և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հանրահռչակել պատմամշակութային արժեքները, քանզի հուշարձանները երկրի և ժողովրդի մշակութային ժառանգությունն են, մարդկանց հիշատակը և իրադարձությունները հավերժացնող արվեստի ստեղծագործություններ:

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա առիթով Մանկավարժական համալսարանի թանգարանում բացվել է «Հուշարձանները նամականիշներում» խորագրով նամականիշների ժամանակավոր ցուցադրություն, որտեղ ներկայացված են ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում հայկական եկեղեցական շինությունների պատկերները, խաչքարերը, քանդները: Դրանց մեջ հատկապես ուշագրավ են Սասունցի Դավթի ձիարձանը, Մայր Հայաստանի, Հայկի քանդակները: Միևնույն ժամանակ ցուցադրված են Սարդարապատի, Էրեբունու թանգարանային հոյակերտ ճարտարապետական շինությունները: Նամականիշներում ներկայացված են նաև աշխարհի տարբեր երկրների ճարտարապետական հուշարձաններ և քանդակային ստեղծագործություններ:

Ցուցադրվող նամականիշները համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից են:

Լիլիթ ՍԵՓՅԱՆ
Թանգարանի ավագ գիտաշխատող

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 25.04. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ